

ԲԱԶՄԱ ՀԱԶԱՐԱՆՈՑ ԾՈՅՑԵՐ ԵՐԵՒԱՆԻ ԵՒ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԷՋ

Մեղմի՛ր առամդ, դու ամենքի մօտ

Բացեքաց լալու իրաւունք
չունես

Քէկուզ վիրաւոր, քէկուզ
արեաբամ՝

Ձէնքերդ տալու իրաւունք
չունես.

Դու՛, հա՛յ բանասեղծ, ինչ էլ
որ լինի

Վերջին գիտութեան էլ ընկնի
յուսահատ,

Յո ժողովրդի յաւերժութեանը

Չհաստատու իրաւունք չունես:

ՍՆԼԱ ՆԱԿՈՒՆԱՆԱՆ

ԱՍՈՇԻԷԹՈՏ ՓՐԷՍ լրատու գործակալութեան հազարդամ լուրերուն համաձայն, երկուշաբթի, 22 Փետրուարին Խորհրդային Հայաստանի մայրաքաղաք՝ Երևանի մէջ տեղի ունեցած են բազմահազարանոց ցոյցեր, որոնց ընթացքին հայերը պահանջած են Լեւոնային Ղարաբաղի ինքնավար մարզի միացումը Խորհրդային Հայաստանի հանրապետութեան:


Ցոյցերը սկսած են ժամը 11-ին, երկուշաբթի օր եւ շարունակուած են յաջորդական օրերը: Ցուցարարները հաւաքուած են Երևանի Օփերայի եւ Պալէի թատրոնին շէնքին առջեւ, որը կը գտնուի Երևանի կեդրոնը:

Հայաստանի Կոմկուսի Կեդրոնական Կոմիտէի առաջին քարտուղար Կարէն Դեմիրճեան Երևանի Հեռատեսութեան ելոյթ ունենալով, հանդարտութեան կոչ ուղղած է ցուցարարներուն, յայտնելով միեւնոյն ժամանակ թէ Ղարաբաղը Հայաստանին վերամիացնելու հարցը կը մնայ օրակարգի վրայ եւ կը հետապնդուի:

Կողմնակի ցոյցեր տեղի ունեցած են նաեւ Հայաստանի Մինիստրներու Խորհուրդի եւ Կեդրոնական Կոմիտէի շէնքերուն առջեւ:

Ոստիկանութիւնը միշտ հետեւած է ցոյցերուն, սակայն առանց միջամտելու:

Միւս կողմէ անցնող շաբթուան ընթացքին Ղարաբաղի Ինքնավար Մարզի Կոմկուսի լիագումար Նիստի ընթացքին համապատասխան առաջարկութիւն ձեւակերպուած է վերադաս մարմիններուն, Լեւոնային Ղարաբաղի Ինքնավար մարզը Հայաստանին վերամիացնելու համար: Այս դիրքորոշումը իւրացնող եւ քաջալերող ցոյցեր տեղի



ԲԱԶՄԱՀԱԶԱՐԱՆՈՅ ՑՈՅՑԵՐ ԵՐԵՒԱՆԻ ԵՒ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԷՋ

Ստացուած վերջին հեռագրալուրերուն համաձայն, Սովետական Միութեան Կեդրոնական կառավարութիւնը դրական միջամտութիւն կատարած է: Կորպաչով անձամբ ելոյթ ունենալով, հանդարտութեան հրաւիրած է ժողովուրդը, հաստատելով միաժամանակ, թէ Ղարաբաղը Հայաստանին վերամիացնելու հարցը դրական լուծում կրնայ ստանալ ըստ ԼԵՆԻՆԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ:

Տաք շրջան մը բոլորելէ յետոյ, նոր զարգացող երեւոյթները ցոյց կուտան թէ հայութիւնը յուզող հարցը կ'ընթանայ դէպի լուծում, Կեդրոնական կառավարութեան լայնախոհ կեցուածքին շնորհիւ:

ԿՈԶՆԱԿԻ նախորդ թիւին մէջ, ՂԱՐԱԲԱՂ խորագիրը կրող յօդուածով մը անդրադարձած էինք պատմական Արցախին եւ ժամանակակից Ղարաբաղին:

Անգամ մը եւս ընդգծենք, թէ արցախը իր հնագոյն պատմութեամբ, մշակոյթով, ժողովուրդով, հաւատքով եղած է հայկական. նոյնը եւ ժամանակակից Ղարաբաղը իր մօտիկ անցեալով ու ներկայով հայկական բնօրրան է, կապուած հայ ժողովուրդի արմատներուն: Եւ իսկապէս անբնական երեւոյթ է հայկական բնաշխարհին պատկանող, հայութեամբ շնչող ու ապրող շրջան մը կապել մէկ այլ հանրապետութեան: Իւրաքանչիւր ժողովուրդի եւ հանրապետութեան իրաւունքներն ու ազգային զգացումները յարգելի են: Յարգանքի արժանի պէտք է ըլլան նաեւ հայկական հանրապետութեան իրաւունքները եւ տառապած հայ ժողովուրդի ազգային զգացումները:

Ըստ վերջին լուրերուն, Հայաստանի տարածքին վրայ առկախուած են ցոյցերը, ժամանակ տալու համար կառավարութեան, որպէսզի հարցը հետապնդէ եւ դրական լուծումի մը յանգի:

Լոնտոնի անգլիական թերթերը երէկ գրեցին թէ բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկեան եւ լրագրող Զօրի Բալայեան մեկնած են Մոսկուա, անհրաժեշտ տեսակցութիւններու համար: Ըստ մամուլին, երկու պատուիրակները արդէն վերադարձած են Երեւան: Տակաւին մեր կողմէ չհաստատուած լուրերու համաձայն, կեդրոնական կառավարութիւնը, որպէս առաջին եւ անմիջական միջոցառում Ղարաբաղի հայկական բոլոր դպրոցները յանձնած է Հայաստանի լուսաւորութեան մինիստրութեան (կրթական նախարարութիւն) տնօրինութեան: Հայաստանի համապատասխան մարմիններու տնօրինման յանձնուած է նաեւ պատմական յուշարձաններու պահպանութիւնը:

Հայաստանի աշխատաւորութեան, մտաւորականութեան եւ պատասխանատու դէմքերու հրապարակային պահանջներն ու ցոյցերը, կը հաստատեն ՎԵՐԱԿԱՌՈՒՅՄԱՆ գործընթացի դեմոկրատիան եւ ազատամտութիւնը: